ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» օգոստոսի 2020թ. N ՄՈ/363-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի 2-ի N878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին վերապահված գործունեության ոլորտում որոշակի աշխատանքների իրականացման նպատակով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության ոլորտի գործառույթներն իրականացնող փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 25.08.2020 17:11:50 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հ ա վ ե լ վ ա ծ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2020 թվականի Դեկտեմբերի ի 25-ի
N ՄՊ/363-2020 որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզպետարանում զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության ոլորտի գործառույթներն իրականացնող փորձագետի

Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության ոլորտի գործառույթներն իրականացնելու նպատակով:

Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

1. մասնակցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարմանը.
2. ապահովել ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին վերապահված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի (այսուհետ՝ Մարզ) զարգացման ծրագրերի, զբոսաշրջության բնագավառի լիազորությունների իրականացումը.
3. իրականացնել Մարզի զարգացման ռազմավարության, Մարզի զարգացման ծրագրերի մշակման և իրագործման աշխատանքները,
4. իրականացնել Մարզի գործունեության ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացումը
5. վերլուծել Մարզի զարգացման հնարավորությունները, սահմանել ներոլորտային գերակայությունները և նախանշել հնարավոր ֆինանսական աղբյուրները,
6. իրականացնել տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում մեթոդական աջակցության տրամադրման, վերլուծման և ամփոփման աշխատանքները
7. իրականացնել զարգացման ծրագրերին ուղղված սեմինարների և քննարկումների կազմակերպման աշխատանքները,
8. իրականացնել մասնավոր հատվածի, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության, ինչպես նաև մասնավոր ներդրումային ծրագիր-առաջարկների մշակմանն աջակցության ցուցաբերման, ծրագրերի հավաքագրման, ներդրումային էլեկտրոնային հարթակի վարման աշխատանքները,
9. մասնակցել մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքների ապահովմանը,
10. մասնակցել զբոսաշրջության ոլորտի տեղեկատվական բազայի ստեղծման գործընթացներին
11. իրականացնել այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և Մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքներ.
12. մասնակցում է տնտեսական հնարավորությունների բացահայտման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև ներկայացնում է առաջարկություններ Մարզի զարգացմանը միտված ծրագրերի նախապատրաստման և իրականացման վերաբերյալ.

13. մասնակցում է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի կազմման՝ հայտերի, ամբողջական փաթեթների կազմման, հաստատման ներկայացման, մշտադիտարկման աշխատանքներին:

14. մասնակցում է Մարզի համայնքներում տարբեր ֆինանսավորման աղբյուրներով իրականացվող զարգացման ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքներին, ինչպես նաև պատրաստում է զբոսաշրջության ու արտաքին կապերի ոլորտներին առնչվող փաստաթղթեր:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգավվում է մեկ տարի ժամկետով:

Ակնկալվող արդյունքը

Մարզի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության ոլորտի գործառույթների իրականացում:

Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1) Տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

2) հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ զբոսաշրջության կամ սոցիալական բնագավառում վերլուծության իրականացման՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ,

3) գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

5) ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան